

**ԲԻՅԵՎԻՈՐ (ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ) ՄԵԹՈՂԸ
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՁ.
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Յ.Յ. Սուքիասյան
քաղաքական գիտությունների թեկնածու

Ժամանակակից քաղաքագիտության մեջ կարելի է առանձնացնել երկու հիմնական մակարդակ՝ տեսական և կիրառական: Եթե տեսական քաղաքական գիտության շրջանակներում ուսումնասիրվում են քաղաքական աշխարհի գործառնության օրինաչափությունները և միևնույն ժամանակ փորձեր են կատարվում որոշել վերջինիս փոփոխության ուղղությունները, ապա կիրառական քաղաքագիտության ներկայացուցիչները զբաղվում են ընթացիկ քաղաքական պրակտիկայի արդի խնդիրների լուծման համար մեթոդների և միջոցների մշակմամբ: Քաղաքագիտությունը, ինչպես և ցանկացած գիտություն, ունի իր մեթոդաբանությունը և հետազոտության մեթոդները: Ի սկզբանե քաղաքագիտության մեջ կիրառվում էին սահմանափակ թվով հետազոտական հարացույցեր և մեթոդներ, որոնք կոչված էին վերլուծելու քաղաքական կյանքի ինստիտուցիանալ, նորմատիվ-իրավական, պետական-իշխանական ասպեկտները: Հետագայում քաղաքական հետազոտությունների մեթոդների թիվն ավելացավ հատկապես 50-ական թթ., երբ համաշխարհային քաղաքագիտությունը հարստացավ մեթոդաբանական նոր մոտեցումների մի ամբողջ համալիրով: Քաղաքական գիտության մեջ հետզհետե սկսեցին ավելի հաճախ կիրառվել հետազոտական մեթոդներ և հնարքներ, որոնք փոխառվել էին մշակութային մարդաբանությունից (անտրոպոլոգիա), սոցիալական հոգեբանությունից, սոցիոլոգիայից և մի շարք այլ բնական գիտություններից՝ մասնավորապես մաթեմատիկայից, ֆիզիկայից: Քաղաքագիտության մեթոդաբանության և հետազոտության մեթոդների մշակումը և ներդրումը դարձան քաղաքական գիտության ինստիտուցիանալացման գործընթացի կարևորագույն բաղկացուցիչ:

Մեթոդաբանությունը իրենից ներկայացնում է հետազոտության կազմակերպման և իրականացման որոշակի եղանակ: Այն իր մեջ ներառում է մեթոդների և հնարքների համակարգ, որոնք իրենց ընդհանրության մեջ ներկայացնում են քաղաքական գիտության առջև ծառայած խնդիրների լուծման համար ամբողջական մոտեցում: Մեթոդա-

բանության հետ սերտորեն կապված են գործընթացներն ու ընթացակարգերը, տեխնիկական հնարքները և հետազոտության ու վերլուծության միջոցները, ինչպես նաև տվյալների ստուգումը և գնահատումը: Ըստ էության՝ մեթոդաբանությունը փաստերի բացատրության, հետազոտական ծրագրերի, տվյալների հավաքագրման հնարքների, կանոնների և չափանիշների մի ամբողջ համալիր է: Ցանկացած գիտություն, ինչպես և քաղաքագիտությունը, ունի իր սեփական մեթոդաբանական ապարատը և վերլուծության գործիքակազմը, առանց որոնց կիրառման իրապես չի կարելի խոսել քաղաքական գիտության առարկայի և քաղաքական գործընթացների և երևույթների օբյեկտիվ ուսումնասիրության և վերլուծության մասին: Մեթոդաբանություն հասկացության հետ սերտորեն կապված է մեթոդ հասկացությունը (լատ. "methodos" – ուսմունք, տեսություն, հետազոտության ուղի), որը վերլուծության միջոց է, գիտելիքի ստուգման և գնահատման եղանակ:

Քաղաքագիտական մեթոդների հիմնական հնարքները ձևավորվել են աստիճանաբար՝ քաղաքական մտքի պատմական զարգացման ընթացքում: Քաղաքական գիտության մեթոդաբանության զարգացման պարբերացումը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝ դասական շրջան, ինստիտուցիոնալ շրջան, բիհեվիոր և պոստբիհեվիոր շրջաններ:

20-րդ դարում քաղաքագիտության զարգացման վրա առավել նշանակալի ազդեցություն ունեցավ բիհեվիոր (վարքաբանական) մեթոդը: Բիհեվիորիզմը ոչ միայն մեթոդ է, այլ մի ամբողջ մեթոդաբանական ուղղություն հասարակական գիտություններում: Բիհեվիորիզմի՝ (անգլ. Behavior - վարք, վարքագիծ)¹ որպես գիտական գիտելիքի առանձին համակարգի հիմնական սկզբունքներն առաջացել են դեռևս 19-րդ դարի վերջում ամերիկյան հոգեբանության մեջ և շատ արագ տարածում են գտել հասարակական այլ գիտություններում, որտեղ ունեցել են տվյալ գիտությանը բնորոշ առանձնակի արտահայտվածություն: Վարքաբանական մեթոդի էությունը հասկանալի է հենց թուն հասկացությունից. դա քաղաքականության՝ որպես մարդու վարքի յուրահատուկ ոլորտի ուսումնասիրությունն է: Իր զարգացման ընթացքում վարքաբանական մեթոդը ձգտում էր քաղաքականության ավելի «կառուցողական-պրագմատիկ» իմաստավորման՝ հիմնվելով քաղաքական և հոգեբանական գիտելիքների համադրման վրա: Ամերիկացի

¹ *Политический словарь*: http://mirslovari.com/pol_a

հետազոտող Չ. Սերիանը¹ առաջիններից էր, ով հասկացավ այս մեթոդի անհրաժեշտությունը և փորձեց կիրառել այն: Հիմնավորելով քաղաքագիտության մեջ քաղաքական վարքի կենտրոնական դերը և նշանակությունը՝ նա առաջարկեց վեր հանել անհատի, այս կամ այն սոցիալական խմբի քաղաքական վարքը, ինչպես նաև բազմաթիվ այլ երևույթների էությունը էմպիրիկ ճանապարհով, քանակական մեթոդներով՝ քաղաքական գիտության մեջ միավորելով էմպիրիկ սոցիոլոգիայի և սոցիալական հոգեբանության հետազոտական հնարքները:

Հետագայում վարքաբանական մոտեցման զարգացման մեջ նշանակալի ներդրում կատարեց ամերիկացի հետազոտող Հ. Լասուելը:² Այնուհետև նշված հետազոտողների առաջին հիմնարար աշխատանքների ազդեցության ներքո վարքաբանական մեթոդի կողմնակիցների թիվը սկսեց արագորեն աճել: Դա հիմնավորվում է այն փաստով, որ հետագա տարիների ընթացքում արևմտյան քաղաքական գիտության մեջ հետազոտությունների ճնշող մեծամասնությունը նվիրված էր վարքաբանական մեթոդի ուսումնասիրությանը:

Հարկ է նկատել, որ բիհեվիոր մեթոդի հիմքում ընկած է պոզիտիվիստական մոտեցումը: Վերլուծության այս ձևը ուշադրությունը կենտրոնացնում է նախ և առաջ առանձին անհատի, խմբի, տարբեր տիպի սոցիալական, մշակութային, մասնագիտական և այլ հանրույթների վարքագծի ուսումնասիրության վրա: Քաղաքական գիտության մեջ բիհեվիոր մեթոդը կոչված է որոշելու զանգվածային մակարդակի վրա քաղաքական վարքագծի և, համապատասխանաբար, քաղաքական գործընթացների բնութագրիչները և պատճառները, ինչպես նաև քաղաքական համակարգի գործառնությունը: Եթե ավանդական քաղաքական գիտությունը շեշտը դնում էր պետաիրավական և քաղաքական ինստիտուտների ֆորմալ-իրավական վերլուծության, հասարակության քաղաքական կազմակերպման ֆորմալ կառուցվածքի վրա, ապա բիհեվիոր վերլուծության օբյեկտ են հանդիսանում մարդկանց՝ որպես քաղաքական գործընթացների մասնակիցների վարքագծի տարբեր ասպեկտների ուսումնասիրությունը: Բիհեվիորզիմի սկզբ-

¹ Merriam Ch. The Role of Politics in Social Change. N.Y.: New York University Press, 1936. 149p.

² Лассуэлл Г. Психопатология и политика. Монография /Пер с англ Т Н Самсоновой, Н В Коротковой - М Издательство РАГС, 2005 - 352 с (Серия «Антология зарубежной и отечественной мысли»).

նաղբյուր կարելի է համարել Պ. Դրակերի և Ջ. Լոկի գաղափարներն¹ այն մասին, որ մարդու գիտակցությունը բացահայտվում է մարդու ներքին շարժառիթների հետազոտման և արտաքին փորձառնության օգնությամբ, որոնց համար հետազոտության օբյեկտ են հանդիսանում ահնատի հոգեկան նկարագիրը, մտքերը և ապրումները: Դետազազարգացումների ընթացքում հոգեբանական բիհեվիորիզմը ստացավ նոր մարմնավորում քաղաքական բիհեվիորիզմում. քաղաքական գիտության մեջ ձևավորվեց նոր, հզոր հետազոտական ուղղություն՝ մարդու (անհատի) քաղաքական վարքը որպես քաղաքական համակարգի գործառնության իրական գործոն: Բիհեվիոր վերլուծության շրջանակներում հասարակական կարծիքի հարցումները դարձան հասարակության մտայնությունների, կողմնորոշումների, կարևոր քաղաքական հարցերի վերաբերյալ լայն զանգվածների դիրքորոշումների առանձնահատկության և իրավիճակի վերհանման միջոց: Դարցումների մեթոդաբանության և բիհեվիորիզմի ու նեոպոզիտիվիզմի հետազոտական հնարքների և գործիքների զարգացումը թույլ տվեց լուծել բացառապես, այս կամ այն ազգին ներհատուկ գծերի, ենթամշակույթների, նրանց արտահայտվածության աստիճանի, սոցիալական դասակարգերի, խմբերի և էլիտայի մոտ քաղաքականության վերաբերյալ հստակ կողմնորոշումների առկայությանը (կամ բացակայությանը) վերաբերող, այդ կողմնորոշումների ձևավորման գործում քաղաքական սոցիալականացման դերին վերաբերող հարցերը: Դարկ է նշել, որ արևմտյան քաղաքագիտությունը մեծ հաջողությունների է հասել քաղաքական համակարգի, քաղաքական ինստիտուտների, կուսակցությունների, իշխանության տարբեր ճյուղերի և մակարդակների, քաղաքական և ընտրական գործընթացների, ընտրողների վարքագծի, ընտրության արդյունքների գործառնության մեխանիզմների և հետազոտության գործընթացների հարցում: Քաղաքագիտության նպատակն էր դառնում մարդկանց քաղաքական վարքագծի վրա ազդող շարժառիթների և գործոնների, ինչպես նաև սոցիալական «ոացիոնալ» պլանավորման և վերահսկման համար անհրաժեշտ պայմանների ուսումնասիրությունը և բացատրությունը: Այսպես՝ առաջացավ քաղաքագի-

¹ 1. *Дракер П. Посткапиталистическое общество. Новая постиндустриальная волна на Западе. Антология.* Под редакцией В. Инноземцева. Москва, "Academia", 1999, 436 с., 2. *Локк Дж. Сочинения:* В 3-х т. Т. 2 / Под ред. И. С. Нарского. — М.: Мысль, 1985, - 560с.

տական վերլուծության նոր մեթոդաբանություն՝ հիմնված միջառարկայական կապերի վրա: «Չափման հոգեբանական այս մեթոդի» հարմարեցումը քաղաքագիտության մեջ հանգեցրեց բիհեվիորիզմի ուղղության հաստատմանը և զարգացմանը: Սա թույլ տվեց քաղաքագիտությանը անցում կատարել պետական-քաղաքական ինստիտուտների՝ որպես քաղաքական գիտության հիմնասյուների ուսումնասիրությունից դեպի քաղաքական իշխանության և քաղաքական վարքագծի, հավասարակշռության և հակակշռության, ընտրությունների և հասարակական կարծիքի վերլուծությանը: Բիհեվիորիզմը մեծապես նպաստեց քաղաքագիտության՝ որպես դասական գիտության առարկայի ձևավորմանը: Ընդ որում՝ ի սկզբանե այս հարցում ուշադրությունը կենտրոնացվում էր քաղաքականության նկատմամբ սուբյեկտիվ շարժառիթների ուսումնասիրության վրա: Ենթադրվում էր, որ շաժառիթները որոշակիորեն կախված են նաև անհատի հոգեկան վիճակից: Ավելի ուշ առաջնային նշանակություն ստացավ քաղաքագիտական գիտելիքի վերիֆիկացիայի (հավաստիության ստուգում) խնդիրը: Քաղաքական բիհեվիորիզմը առավելապես զարգացավ 2-րդ համաշխարհային պատերազմից հետո: Դա կապված էր իշխանության ինստիտուցիոնալացման, պետական կառավարման տեխնոկրատացման հետ: Բիհեվիորիզմի՝ որպես նեոպոզիտիվիզմի տարբերակներից մեկի կարևոր առանձնահատկություններից է համարվում քաղաքագիտական հետազոտություններում արժեքային մոտեցման անթույլատրելիության կանխադրույթը: Բիհեվիորիզմի կողմնակիցների համար միակ ճիշտ տարբերակը միայն փաստերի կիրառման մեթոդաբանությունն է, որը կա՛մ փորձով հաստատված է, կա՛մ էլ այդ փաստերը ստացվել են բնական գիտություններում կիրառվող ձևական-տրամաբանական կամ մաթեմատիկական մեթոդների օգնությամբ: Նրանց կարծիքով քաղաքագետները պետք է մի կողմ դնեն բարոյա-էթիկական և արժեքաբանական հարցերը և զբաղվեն բացառապես քաղաքական գործընթացների մասնակիցների վարքագծի նկարագրությամբ և վերլուծությամբ:

Շնորհիվ քաղաքական բիհեվիորիզմի՝ քաղաքական գիտությունը դադարում է միայն տեսական լինելուց. այն զբաղվում է նաև կոնկրետ հետազոտական աշխատանքով: Մյուս կողմից՝ քաղաքական բիհեվիորիզմին ներհատուկ են նաև բացասական կողմեր՝ մասնավորապես՝ քանակական տվյալների և փաստերի հատվածական վերլուծության նկատմամբ չափից ավելի հակվածությունը, ինչն էլ խոչընդո-

տում է գլոբալ քաղաքական խնդիրների լուծման համար ընդհանրա-
կան մոտեցմանը: Սակայն նույնիսկ հետազոտական ապարատի
մշակվածության դեպքում էլ բիհեվիորիզմը չկարողացավ որսալ և բա-
ցահայտել քաղաքական երևույթները և գործընթացները իրենց բազ-
մազանության մեջ: Պարզվեց, որ հիմնվելով միայն էմպիրիկ փաստե-
րի վրա, հրաժարվելով տեսական և գաղափարական հիմքերից, անհ-
նար է բացահայտել քաղաքական երևույթների իրական պատկերը:
Անհրաժեշտություն առաջացավ փորձից անցում կատարել դեպի լայն,
ընդգրկուն ընդհանրացման, ինչն էլ նպաստեց մի նոր ուղղության ի
հայտ գալուն, որն էլ ստացավ «պոստբիհեվիորալ հեղափոխություն»¹
անվանումը: Այն հիմք դրեց Արևմուտքի սոցիալ-հումանիտար գիտութ-
յուններում պոստբիհեվիորիզմի և պոստպոզիտիվիզմի նոր ուղղութ-
յունների զարգացմանը, քաղաքականության տեսության և փիլիսո-
փայության, քաղաքականության մեջ արժեքաբանական սկզբի վերա-
բերյալ հետաքրքրության վերածնունդին:

Չնայած՝ արևմտյան քաղաքագիտության մեջ բիհեվիոր մեթոդը
70-ական թվականներից սկսեց կորցնել իր դոմինանտ դերը և նշանա-
կությունը քաղաքագիտական հետազոտությունների իրականացման
գործում, այն, այնուամենայնիվ, շարունակում է մնալ ժամանակակից
քաղաքագետների ուշադրության կենտրոնում, և, ինչն ամենա-
կարևորն է՝ այս մեթոդի կիրառումը ԱՊՖ տարածքում, հատկապես՝
Հայաստանում քաղաքական գործընթացների և հայ հասարակության
քաղաքական վարքագծի ուսումնասիրության և վերլուծության հար-
ցում առավել քան կարևոր է՝ հաշվի առնելով հայ հասարակության
քաղաքականացված լինելու հանգամանքը և քաղաքական համակար-
գի փոխակերպման գործընթացները: Հայաստանում քաղաքական
վարքը առաջացնում է հատուկ ճանաչողական հետաքրքրություն և
դրա ուսումնասիրության անհրաժեշտություն՝ հաշվի առնելով այն
գլոբալ երևույթները, որոնք որոշեցին երկրում տիրող ներկայիս սո-
ցիալ-քաղաքական իրավիճակը: Այս դիտանկյունից ժամանակակից
Հայաստանում մեծ հետաքրքրություն է առաջացնում այն հարցը, թե
ի՞նչ տեղի ունեցավ հայ հասարակությունում 20-րդ դարի վերջում,
ինչպես՝ ս փոխվեց մարդկանց քաղաքական գիտակցությունը և քաղա-
քական վարքը սոցիալական-քաղաքական փոխակերպման արդյուն-

¹ *Политология: курс лекций / Под ред. М.Н. Марченко. 2-е изд., Москва., 1997. – с. 26.*

քում: Այս հարցերի պատասխանները թույլ կտան կանխատեսել տարբեր սոցիալական խմբերի քաղաքական մասնակցության բնույթը, նրանց քաղաքական ակտիվության ձևերը, այդ թվում՝ նաև նրանց էլեկտորալ (ընտրական) վարքը, կանխագուշակել քաղաքական ընտրությունների արդյունքները և մշակել համապատասխան քաղաքական ռազմավարություն և ծրագրեր:

Քաղականացման վարքի ուսումնասիրությունը Հայաստանում որպես գիտական վերլուծության առարկա նոր է սկիզբ առնում: Քաղաքական վարքի ուսումնասիրության արդիականությունը Հայաստանում պայմանավորված է ոչ միայն քաղաքական գործընթացների վրա վերջինիս ազդեցության կարևորությամբ, այլ նաև հետազոտական պրակտիկայում նոր գիտական մեթոդների և գաղափարների տարածմամբ: Հայաստանում քաղաքական վարքի ուսումնասիրությունը քաղաքագիտական մեթոդների կիրառմամբ հնարավորություն կտա բացահայտել վերջինիս առանձնահատկությունները, որոնք ներհատուկ են հայ հասարակությանը սոցիալական փոխակերպման պայմաններում: Նշենք, որ հայրենական քաղաքագիտության մեջ քաղաքական վարքի ուսումնասիրության մեկ այլ մեթոդ է առաջարկում է. Օրդուխանյանը՝ քաղաքական խոսույթի միջոցով ուսումնասիրելով հայ հասարակության քաղաքական վարքագիծը:¹ Հայ հասարակության քաղաքական վարքի ուսումնասիրությունը հնարավորություն կտա համարժեք կերպով գնահատել երկրում տիրող քաղաքական իրավիճակը և կանխատեսել հայ հասարակության քաղաքական կազմակերպման զարգացման միտումները ժամանակակից գլոբալ փոխակերպումների պայմաններում:

¹ Օրդուխանյան է. Իշխանություն և ընդդիմություն. քաղաքական խոսույթի վերլուծություն. Երևան, «Լիմուշ», 2010, 228 էջ: